Ամփոփ նյութ

«ՍԻԹԻ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ ԹԻՎ 836, 836/1, 836/5, 836/6, 836/7, 836/9, 836/11, 836/12, 836/14, 836/16, 836/18 և 836/19) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալի որոշմամբ «ՍԻԹԻ» ՍՊԸ (լիցենզիա թիվ 836, 836/1, 836/5, 836/6, 836/7, 836/9, 836/11, 836/12, 836/14, 836/16, 836/18 և 836/19) փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
16/01/2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/16 Ա
«ՍԻԹԻ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ ԹԻՎ 836, 836/1, 836/5, 836/6, 836/7, 836/9, 836/11, 836/12, 836/14, 836/16, 836/18 և 836/19) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար «Սիթի» ՍՊԸ փոխանակման կետի նկատմամբ՝

- **կիրառել տուգանք՝ 32.000.000 (երեսուներկու միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով** Փոխանակման կետի թիվ 836, 836/5, 836/9, 836/11, 836/12, 836/16, 836/18 և 836/19 մասնաճյուղերի կողմից անդորրագրերի չտրամադրման խախտումները թույլ տալու համար,
- **կիրառել նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ թույլ չտալու հանձնարարականով** Փոխանակման կետի թիվ 836 լիցենզիայի ներքո գործող մասնաճյուղի կողմից Արձանագրության 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով, թիվ 836/1, 836/6, 836/7, 836/11 և 836/14 լիցենզիայի ներքո գործող մասնաճյուղերի կողմից Արձանագրության բոլոր կետերով, 836/12 լիցենզիայի ներքո գործող մասնաճյուղի կողմից Արձանագրության 1-ին կետով, թիվ 836/16

լիցենզիայի ներքո գործող մասնաճյուղի կողմից Արձանագրության 1-ին կետով, թիվ 836/18 լիցենզիայի ներքո գործող մասնաճյուղի կողմից Արձանագրության 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև թիվ 836/19 լիցենզիայի ներքո գործող մասնաճյուղի կողմից Արձանագրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով արձանագրված խախտումները թույլ տալու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՄԵՆ ՆՈՒՐԲԵԿՅԱՆ